Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 06 ապրիլի 2026թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ. Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Ավետիսյան

Գ. Պետրոսյան

Քարտուղար՝ Ն. Պետրոսյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2026թ. ապրիլի 6-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է ապրիլի 7-ին 2026թ, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2026թ. ապրիլի 8-ին, ժամը 10:00:

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 8 ապրիլի 2026թ.
Ժամը՝ 10:00

6. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2026թ. ապրիլի 7-ին, ժամը՝ 10:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	ք. Երևան, Էրեբունի 12/4, հեռ. (094) 52 67 51

8. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի նախահաշվային գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*	
					<<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ	
					Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Բենզին ռեգուլյար	լիտր	960	460800	384000	460800

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում <<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ-ն:

10. Հանձնաժողովը որոշեց գնահատել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում առկա փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

11. Ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/2>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<ՄԱՔՍ ՕԻԼ>> ՍՊԸ-ին:

12. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

13. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Լ. Ադամյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Թ. Ավետիսյան

_____ Գ. Պետրոսյան

Քարտուղար՝ _____ Ն. Պետրոսյան